ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԻՑ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԵՆԳԱՄՏՈՒԹԻՒՆԸ

—

Ներկայ յօդուածը մէկ գլուխը կը կազմէ դոկտ. Կ. Փաշայեան խանի «Ընդարձակ դպրոցական Առողջապահութեան», որ արդէն մամուլի տակ է։ Ընթերցողը կը տեսնէ այս նմոյշէն, թէ ո՛րքան հմտութեամբ պատրաստուած եւ նպատակայարմար աշխատութիւն մըն է այս «Դպրոցական Առողջապահութիւն»ը։ Ուրեմն պէտք է որ մեր բոլոր դըպրոցներու մէջ մուտ գտնէ այն իբրեւ դասագիրք, եւ ընտանիքներու մէջ իբրեւ առաջնորդ մանուկներու ֆիզիքական զարգացման։ Գըրքին մէջ զետեղուած բազմաթիւ պատկերներն՝ աւելի ըմբռնելի կընեն այս գիտութիւնը։ Բաժանորդագրութիւնը չատ չնչին է, այսինքն՝ 5 ֆրանք։ Կարժէ օգտուիլ առիթէն։ ԽՄԲ.

Ուղղամտութիւնը՝ ընդհանրապէս փոքր երեխաների մէկ յատկութիւնն է, այդ տարիքի յատուկ է, իսկ գոյութեան կռւին մէջ, մարդկանց զզւելի խարդախութեան հակապատկերը կազմող անկեղծ ուղղամտութեան պատահիլը երբեմն բացառիկ մի բան է։ Երեխայի անկեղծութեան ամենաճշտ գրաւականը, իրան շրջապատողների համար ունեցած անխառն վստահութեան մէջ է կայանում։ Նրա ճշմարտասիրութեան անդիմադրելի եւ ամենատարոյտ մղիչը իր բնական հետաքրքրութեան եւ իր սովորելու անհամբերութեան մէջ է կայանում։ Մարդու զարմանք է պատճառում դատողութեանց խիստ ճշգրտութիւնը։ Ընդհանուր կանոնը այս է։ Բայց աւա՜ղ, ինչպէս ամէն կանոն, այս կանոնն էլ ունի իր բացառութիւնը։ Երեխան նուազ մտածող է քան զգայուն, իր արարքները նուազ գիտակցական են քան բնազդական, միեւնոյն ժամանակ հապճեպ որոշող եւ ազէտ լինելով, իրան գրգռող վայրկենական ցանկութիւններից կամովին յաղթւում եւ գրգիռը կոյրաբար նրան է հետեւում։

Ճնշումը եւ բռնութիւնը շատ անգամ երեխային գրգռում է. ճշմարիտ վարւողութիւնը նրան սիրաշահելու մէջ է կայանում։ Երբոր խըրատութիւն տեսնէ, խորամանկութեան կը դիմէ. կասկած չկայ, որ այդ բանի մէջ կը յաջողուի։ Եթէ յաջողուի, չարիքը արդէն սկսած է. Նա գտած է իր զէնքը, խնամով ծածկում է եւ լռութեան մէջ սրում է այդ զէնքը, բոլոր պատեհ առիթներում գործածելու համար։ Պէտք է աշխատիլ երեխայի ձեռքը այդ զէնքը չը տալ։ Վա՜յ նրան, որ երեխային

digitised by A.R.A.R.@

ճնշում է, նրան խաբում է։ Նա էլ իր կարգին նրան է տանջում, նրան է խաբում։

Բարոյական զգացմունքների փափուկ, համբերատար եւ բազմակողմանի մշակութիւնը երեխայի մէջ տակտին նախատարրական է։ Երեխայի բարոյական հաւատարակշռութիւնը հաստատուն չէ։ Չնչին մի բան կարող է խախտել այդ հաւատարակշռութիւնը։ Դրա փոխարէն դրածողը բնազդումն է եւ նրա հակացած լեզուն խրոխտ է։ Սրա համար է, որ դեռատի հասակի նախնական ուղղութիւնը գլխաւորաբար շատ փափուկ եւ ծանր մի գործ է, նոյնպէս գլխաւորաբար սրա համար է, որ հարկ է լինում զանազան չեղումները խլոյն ուղղել, որոնց հակամէտ են լինում ամենալաւ դիրքի տէր մարդիկ զանազան հանգամանքների նպաստելովն։

Նմանօրինակ պարագայում, չը պէտք է խստութեամբ վարուիլ, այլ վարպետութեամբ։ Այս դէպքում վարպետութիւնը ճշմարիտ մի գիտութիւն է։ Երեխաների խաբեբայութեանց մէջ պէտք է գիտնալ ժառանգական հանգամանքները եւ այս հանգամանքների հոգեկան-բնախօսական պայմանները։ Այս գիտութեան չնորհիւ միայն կարելի է նրանց ճնշել իրենց խոտորումների եւ ցանկութիւնների մէջ։ Իրա չնորհիւ է, որ նիւթեան տղայական մեքենայութիւնը ժամանակին արգիլելով, նենգաւորին վնասեցնում եւ այպէս խափանում են նենգութեան բնածին կամէութիւնները եւ նրանց վրայ հեղինակութիւն եւ առաւելութիւն պահում։

Ուրեմն այս գիտութիւնը ի՞նչ բանի մէջ է կայանում։ Նենգամիտ եւ լիրբ աշակերտից չը խաբուելու համար դրսին ի՞նչ ծանօթութիւններ են հարկաւոր։—Ահա ինչ որ արժէ խորին կերպով քննել եւ ուսումնասիրել։ Թէեւ խնդիրը էութեամբ բժշկական է, բայց ունի նաեւ ճշմարտապէս մանկավարժական հանգամանք։

Նախ, երեխան երբոր սկսել է կարգապահութեան (դիցիպլինի) ճշմարիտ պահանջումներից խուսափել, արած չարաճճիութիւնների համար վերակացուի ուշադրութիւնը վրիպեցնել, մի քանի սխալների համար ուսուցչի քաղցրութիւնը սիրաչահիլ կամ լաւ եւս, պարզապէս իր փոքրիկ անձնասիրութեան վրայ ուշադրութիւն հրաւիրել, աշխատում է հիւանդութիւն կեղծել։

Երեխաների հիւանդութիւններ կեղծելու մասին հատորներ են գրել Ֆրանսիայում՝ J. Simon, Bourdin, Fournet, Daily եւ Molet. Շվէյցիայում՝ Abelin եւ Malmstea, Գերմանիայում՝ Wiltmann, Անգլիայում՝ James Paget եւ ուրիշ մասնաւոր խնամքով զբաղուել է Բուդապէշում Cross. վերջապէս Ֆարիզում Dufestel Երեխաների կեղծ հիւանդութեանց (Les maladies simulées chez les enfants) վրայ մի շատ դրգիռ ուսումնասիրութիւն է հրատարակած։

digitised by A.R.A.R.@

Մի քանի դօկիւմէնտներից երեւում է, որ երեխաները ստախօսութեան աւելի ընդունակ են 11-ից 15 տարեկան հասակում։ Նոյնպէս այս տարիքումն է, որ ցանկութիւնը յանկարծ բուռն է դառնում, մինչդեռ թմրած եւ անբաւական կերպով զարթնած անձնական արժանապատւութեան զգացումը, ինչպէս նաեւ դատողութիւնը տակաւին տարրական եւ թոյլ է։

Այս կեղծաւոր յղացումների ծագումը չորս տարեկանից առաջ բընաւ գոյութիւն չունի, նրանք չեն կարող կեղծել։

Փոքր մանչերից աւելի փոքր աղջիկները բնութեամբ աւելի ընդունակ են կեղծելու։ Այս բանին բոլոր աշխարհ համաձայն է։ Կանխահասութեան, ճարպիկութեան եւ յանդգնութեան մէջ աղջիկները մանչերից անցնում են։ Էրօսի կողմից նշանակւած կեղծելու 14 պարագաներում, 2-ը միայն մանչերին է պատկանում իսկ 12-ը աղջիկներին։ Դիւֆէստէլի քննած 79 դէպքերից 49-ը աղջիկներին է վերաբերում, իսկ 30-ը մանչերին։ Ուրեմն, երկու սեռի մէջ արձանագրելու արժանի 1/3 մի տարբերութիւն կայ։ Դալէի եզրակացութիւնները այս մասին Էրօսի նշանակածների համանման են։

Այս կարգի երեխաների մէջ կան, որ պատահական, բայց յաճախօրէն որոշ մի չարժամիտից դրդւած են կեղծում, կան էլ, որ այդ բանին տեղի են տալիս իսկապէս հիւանդագին մի ճակատագրով — հիսդէրիայի վերաբերեալ ճակատագրով։ Այս երկու ծայրայեղ խմբերի միջեւ գոյութիւն ունի մի միջին խումբ եւս։ Ուրեմն, ըստ Դիւֆէստէլի, փոքրիկ կեղծողները երեք խմբերի են բաժանւում։

Առաջինները բաղկանում են այն երեխաներից, որոնց գործարանները առողջ են, նրանք, շատ որոշ նպատակով, աննշան բաներ են կեղծում։ Երկրորդ կարգի մէջ են գտնւում այն երեխաները, որոնք աւելի կնճռոտ բաներ են կեղծում եւ այն տեղ են մղւում թէ իրենց բնազդումով եւ թէ իրենց նախնական դաստիարակութեամբ։ Այս կարգի երեխաները մտաւորական տեսակէտից վատ հաւասարակշռութեան մէջ են գտնւում։ Յաճախ նրանց մէջ աւելի կամ նուազ բացայայտ կերպով ջղային մի ժառանգականութիւն գոյութիւն ունի։ Երրորդ խմբի մէջ են գտնւում հիստէրիքոտ կեղծողները։

Այս խմբերի իւրաքանչիւրի վրայ մի մի խօսք աւելացնենք։

Առաջին խումբ. — Ո՞վ չէ ունեցել իր ծուլութեան օրերը։ Ահա այդպիսի մի օրում սովորելիք դասը աշակերտին տաղտկալի է թւում. պարտաւորութիւնը իր կարողութիւնից բարձր է գալիս, եւ ահա իսկոյն գլխացաւ է կեղծում։ Մի ուրիշ օր ման գալ է ցանկանում, միօրինակ աշխատութիւնը ձանձրալի է թւում, եւ այս անգամ էլ խիթ (սանջու) է կեղծում։ Այս տիպի երեխան ճախողակ կեղծող է։ Ի՞նչ որ նրան հրամայում են, ծանր է թւում, բայց հետեւեալ օր առանց վարանելու

digitised by A.R.A.R.@

ընդունում է իր թերութիւնը։ Այսօր միայն մի դաղափար ունի—ծիքը ազատել — , առանց գիտնալու ինչո՞ւ համար . . . , քմահաճոյքի գործ, ուրիշ ոչինչ ։ Քիչ առաջ չատ հիւանդ էր, այժմ առողջացել է ։ Պատճառը ի՞նչ որ էլ լինի , նրանց կեղծիքը՝ չարժանիք հաստատունութեամբ , մանաւանդ յանկարծականութեամբ բնորոշւում է ։

Երկրորդ խմբի մէջ կեղծիքը աւելի կնճռոտ է ։ Սրա մէջ էլ նոյնպէս անժխտելի է նպատակի յայտնի տիրապետութիւնը , բայց դէպքերը բոլորովին տարբեր կերպով են տեղի ունենում։ Նենգամտութիւնը՝ երեխայի նշանակելի ընդունակութիւններից մէկն է եւ սովորաբար կապւած է երեւակայութեան աշխուժութեան եւ մտքի պայծառութեան հետ ։ Երեխան իմանում է թէ ի՞նչ է ուզում․ վաղուց իր որոշումը առած է․ իր մտադրած ցանկութիւնը իրականացնելու համար որ եւ իցէ միջոց նրան ծանր չէ թւում, որ եւ է արգելքի առաջ չէ ընկըրկում ։ Իր ծրագիրը ամբողջացնում, կոկում եւ զտում է։ Նախապէս բոլոր արգելք նախատեսւած է , բոլոր նկատողութեանց պատասխանը արդէն պատրաստել է․ որ եւ իցէ մանրամասնութիւն չէ մոռացւած . ոչ մի բան պատահականութեան չէ թողնւած։ Այս ծրագիրը այնքան ճարպիկօրէն եւ մտածւած կերպով է պատրաստւած , որ ամենափորձառուներն իսկ խաբւում են եւ երեխայի այնքան յամառութեան , ճարպիկութեան եւ յանդգնութեան առաջ՝ փոխնիփոխ մեծեանց՝ յաջորդող քննութիւնները ի դերեւ են ելնում։

Կանխահաս խարդախութեամբ մտածւած այս մեքենայութեանց սովորական դերակատարները 8-ից 14 տարեկան աղջիկներն են ։

Այս չարեաց գլխաւոր սկզբնապատճառները ժառանգականութեան եւ դաստիարակութեան մէջ պէտք է փնտռել ։

Երրորդ խմբի մէջ գտնւողները ստում են ստելու համար , խաբում են խաբելու համար , էնտրիգներ են սարքում էնտրիգներ սարքած լինելու համար ։ Պատահարար են ամբաստանում , եւ 'ի հարկին երեւակայական չար գործերով իրանք իրանց են ամբաստանում։ Սրանք հիստէրիքոտներ են , տարօրինակ , անհեթեթ եւ յաճախ անգիտակցելի գրգռութիւնների ենթակայ են ։ Սրանք իսկապէս ախտաբանական երեւոյթներ են , պարզապէս հիւանդներ ։ Մինչդեռ երկրորդ խմբին պատկանողները հիւանդութեան առողջութեան ճիշտ մէջ տեղն են գտնւում , սրանց ursa-բնախօսական անունը պէտք է տալ ։

Հիստէրիա ունեցող երեխան , նոյն հիւանդութեան ենթակայ մի չափահասի չափ ճարպիկութեամբ, յամառութեամբ եւ յանդգնութեամբ կեղծում է ։ Չափահասի նման սիրում է ծայրայեղութեանց դիմել եւ ինչ գնով և՛ւ որ լինի , ցանկանում է , որ իրմով զբաղւեն, իրա մասին զանգատւեն, իր թշւառութիւններին մասնակցեն ։ Ի՛նչ որ էլ լինի, նըրան միայն հարկաւոր է հետաքրքիր դառնալ , ուշադրութիւն գրաւելու

digitised by A.R.A.R.@

միակ յոյսով ընդունակ է անել ամէն տեսակ այլանդակութիւններ, ստախօսութիւն, խաբեբայութիւն, զրպարտութիւն։

(Շարունակելի) Դոկտոր Կ. ՓԱՇԱՅԵԱՆ

ՄԱՄՈՒԼԻ ԲԱԺԻՆԸ

Հ. ՔԵՐՈՎԲԷ ՉՐԱՔԵԱՆ, Անկանոն գիրք առաքելականք։ (Գ-րդ հտ. Թանգարանի հայկական հին եւ նոր դպրութեանց։) Վիեննա. 1904։ 8° եր. ԺԵ+496։ Գինն է՝ 5 ֆր.

Ինչպէս հին եւ Նոր Կտակարաններու՝ նոյնպէս եւ առաքեալներու կենսագրութեանց յատուկ գրքերու (Գործք Առաքելոց) անկանոններն ալ գոյութիւն ունին, որոնք հին ժամանակ յերիւրուած են այս ու այն կղերականի կողմէ։ Այստեսակ ձեռագիրներ շատ կը գտնուին արեւելեան գրեթէ բոլոր լեզուներով։ Ներկայ հրատարակութեանս ալ առաքեալներու մասին գրուած եւ մեր նախնիքներէն հայերէնի թարգմանուած անվաւեր գրքերու հաւաքածուն է, զոր բազմաթիւ ձեռագիրներու հետ բաղդատելով կազմած է ս. Ղազարի երիտասարդ եւ եռանդուն միաբաններէն հ. Ք. վ. Չրաքեան։ Գիրքը նուիրուած է «Ի յիշատակ Մկրտչի Էմին»։

ՖՐ. ՋԱԼԽՈՒՇԵԱՆ, Հայոց հարցը Ռուսաստանում։ Ռոստով 1905։ 8° եր. 36։

Ռուսերէն լեզուով գրուած այս գրքոյկին իրաւամբ պատիւ կը բերէ համակրելի հեղինակին, որ գիտցած է իրաւաբանական փաստերու վրայ հաստատելով՝ հետեւեալ վեց գլուխներու մէջ ամփոփել Հայոց հիմակուան ցաւերն ու պահանջները. 1) Փոքր ինչ պատմութիւն եւ փոքր ինչ վիճակագրութիւն. 2) Հայոց դպրոցներու փակումը. 3) Հայոց բարեգործական եւ կրթական հիմնարկութիւններու փակումը. 4) Եկեղեցական կալուածներու խլումը եւ կաթողիկոսի աստիճանի նուաստացումը. 5) Ինչո՞ւ կը յուզուին Հայերը. 6) Ինչպէ՞ս կը լուծուի Հայոց հարցը։ Այս գլուխներուն կը յաջորդէ — «Հայերուն հանրագիրը»։ Ուրախալի է, որ մօտերս պիտի կարենանք հայերէն թարգմանութիւնն ալ ողջունել պ. Ֆր. Ջալխուշեանի այս նշանաւոր աշխատասիրութեան։

Լ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ եւ Ռ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ. Հայոց հին ճարտարապետութեան նշմարներ։ Տետր Ա-Գ։ Պետերբ. 1904-5։

1870-ին Պետերբուրգի մէջ «Հայաստանի եւ Վրաստանի մէջ բիւզանդական ճարտարապետութեան հնակերտներ» անունով ֆրանսերէն

digitised by A.R.A.R.@